հալին, և ան սաեն մարդ կաշի ոսկոր կը մնայ, ինչպէս սովորաբար կը զուրցուի։ Եթէ այդ վիճակը դեռ ևս շարունակէ, և միսն ալ սպառած ըլլալով կրակը սնուցանելու անբաւական ըլլայ, արիւնը չտատամիր. մէկէն արիւաբար ամենէն էական գործարանաց վրայ կը յարձակի, և անխտիր ամենայն ինչ կը սպառէ, նաև ինքզինքն ալ. և որովհետև ատոր վերջը չգար, եթէ պատեհ ժամանակին դուրսէն օգնութիւն չգայ, քիչ ատենուան մէջ տունն անբնակելի կ'ըլլայ և կեանքը մէջէն կը բաժնուի կ'ելլէ։ Մարդն անօթութէն կը մեռնի։

Բայց ինչպէս այն խեղճ Բեռնարդոս Բալիսի իր կնկանը և որդւոցը համար կ'աշխատէր, որոնց բարօրութիւնն էր իր ճգանց գերագոյն նպատակը, թէպէտ և վտանգի մէջ կը դնէր զանոնք ամեն բանէ զուրկ թողլու, նմանապէս արիւնն ալ մինչև եռքի վայրկեանն այդ կեանքին համար աշխատեցաւ, զոր և վերջապէս դռնէն դուրս հանեց, և այդ կործանիչն աշխատութիւնն զկեանքն առաւ տարաւ, իրապէս անոր բնակութիւնն երկարելու հետևանքն ունեցաւ։ Առանց այս գործողութեան շատոնց առաջ բանը կը լմնար։

Կը շարունակուի։

ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

(Տես երես 115։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

Յայսմ աւուր յիշատակ է հինգերորդ աւուր արարչագործութեանն Աստուծոյ։ Յորում ասաց Աստուած թէ՝ հանցեն ջուրք զեռունս շնչոյ կենդանեաց։ Յետ զարդարելոյ զերկիր ծառք և տնկք և զերկինս լուսաւորք, գայ ըստ կարգի՝ ընդ զպակասութիւն ջրոյ յինքենէ, որպէս զիերութիւն երկրի յիւրմէ բնութենէն։

Զի յայտ լիցի՝ թէ ոչ վայրապար չբրջէր հոգին Աստուծոյ՝ի վերայ ջուրց՝ մինչ կայր ջուրն՝ի վերայ հողոյ. այլ զի տացէ նոցա զօրութիւն և բնութիւն ծնընդարարութեան։ Եւ ասաց՝ի դէպ ժամու՝ զի տացէ զոր էառն. զթիւն ոչ ցուցանելով, որպէս և ոչ զբուսոց երկրի, և ոչ զաստեղաց երկնից. և մանաւանդ՝ զի մի աշխատ արասցէ զմեզ՝ զգործս անբաւաղօրին Աստուծոյ՝ի համար ասելանել։ Այլ զայն միայն արարչին թողցուք գիտել՝ որ թուէ զբազմութիւն աստեղաց և զբուսոց երկրի, զչիթս անձրևաց և զաւազ ծովուց։ Եւ ասաց Աստուած. հանցեն ջուրք զեռունս շրնչոց կենդանեաց. համատարած ամենայն ջուրց հրամայեաց և ամենայն խոնաւութեանց. զի բղխեսցեն անհատաբար զկենդանի զեռունս, զոր մինչև ցայսօր է տեսանել.՝ի խոնաւուտ տեղւոջէ և՝ի սակաւուն աւազոյ գորտք և ժրժմակք, մկունք և զեռունք և մրժղուկք. քանզի զեռուն ասելովն զամենայն ինչ որ կենաց մասն ունի՝ նշանակէ. սկսեալ՝ի մեծ և յահագին դաղանէն լևիաթանայ. զոր և ինքն Աստուած յայտնեաց համբերող նահատակին Իւրոյ Յովբայ։ Նա է ասէ սկիզբն արարածոց տեառն որ՝ի ջուրս. զոր ոմանք երկու ասեն՝ որ փոխեն զիրեարս և որսան կերակուրս։ Այլ Աստուած միաւոր ասաց՝ և մի է և անմահ մինչև ցկատարած կենցաղոյս։ Եւ ապա սպանանէ զնա՝ որ արարն զնա՝ յօրինակ սատանայի, յորում աւուր տացէ նմա և զիւրն պատուհաս։ Եւ թէ վասն էր է լևիաթանն որ շրջապատեալ է զաշխարհս. քանզի ընդդէմ կայ կոհակացն ովկիանու՝ յայնկոյս Բեռինոս կղզոյն. զի մի ապականեսցէ զաշխարհս։ Զեռունս շնչոյ ասէ՝ քանզի շունչն է նոցայն կենդանութիւն։ Մի է հրամանն՝ և անբաւ են եղեալքն, որոց ոչ գոյ թիւ։ Ոչ միայն համարին, այլ և ոլորանութիւն տեսակին և ազգին. թէպէտ և ասեն, թէ ՀՁ, կենդանեաց ազգ՝ի ջուրս են և ՀՁ, ՝ի ցամաքի, այլ այն ամենայն միայն Աստուծոյ է գիտելի։ Այս ծով մեծ, ասէ մարգարէն, և անդորը, ՝ի սմա են սողունք որոց ոչ գոյ

թիւ, դաղանք մեծամեծք և մանունք և վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ։ Զոր ընդ Յորայ ասաց Աստուած՝ վասն լևիաթանայ, թէ ետու զնա խաղալիք հրեշտակաց. որ 'ի տեսանելն զնա՝ հրեշտակաց Աստուծոյ զահագին կենդանին, զուարճացան և փառս ետուն Աստուծոյ։ Եւ եղեն ազգի ազգի սեռք և տեսակք ձկանց. ոմանք թևաւորք և ոմանք թեփաւորք, և այլք լերկամարմինք. ոմանք տեղասէրք, և այլք մոլորականք։ Ոմանք ձուս ծրտեն, և այլք ձագս ծնանին՝ և ոչ աշխատին 'ի սնուցանելն. այլ 'ի ծովն անկեալ ձուն գոյանայ 'ի Է ա օրն։ Նոյնպէս և որ յարգանդէ անկեալ անխնամ սնանին։ Եւ ելին 'ի ջրոց թռչունք ըստ հաստատութեան երկնից. զի մի և օդն անզարդ մնասցէ։ Եւ ճանապարհ թռչնոց 'ի վերայ օդոյն. զի յոյս տացէ մարդկան երբեմն և ինքեանց ելանել օդո

ևս տարերքն լուան, և 'ի չորից գոյացան ամենայն կենդանիք, որպէս ցուցանեն ոսկերքն զհողն, մանաւանդ զի քարուտ է հողն։ Ջիլք և նեարդք և շարժմունք երակաց՝ զօդն ունին. արիւնն զհուրն. և թանձրութիւն զջուրն։ Այսոքիկ՝ միապէս գտանին ջրայնոցն և ցամաքայնոց։ Եւ այն ևս գիտելի է, զի թռչունք 'ի վերայ օդոյ՝ ք ոտքն և ք թևքն՝ Աստուծոյ երկիր պագանեն։ Ոմանք 'ի ձկանց՝ որոճ ածեն և ոսսակրոսք կոչին։ Եւ այլք 'ի ձկանց և 'ի հաւուց որ սէր իմն և բարեկամութիւն ունին առ ընկերսն. և զորսացեալսն 'ի միասին ուտեն. որպէս պիտնայքն և պինասպասայքն, յօրինակ ընկերասէր և բարեմիտ մարդկան։ Եւ են որ խորամանկութիւն ունին. որպէս հիլոսն փոքրիկ. որ գտեալ 'ի քուն զկոկորդիլոսն գազան, մտանէ ընդ բերանն յորովայնն՝ ուտէ զամենայն փորոտիսն, և ընդ նստոյ տեղիս 'ի դուրս ելանէ։ Եւ հաւն արաքոս՝ կերակրի 'ի մնոյն՝ որ յատամունս կոկորդիլոսին է, բարեկամութիւն կալեալ ընդ նմա. ճչէ և թեւահարեալ փարի զնովաւ. և մաքրէն քորէ զնա. յամօթ այնոցիկ որոց մոռացան զսեղան սիրելեաց իւրեանց։ Զուկն անքիլոս, որ կոչի կողամայր, որովայն ոչ ունի, այլ միայն կողեր մերկ. զորս կոտորեալ մին մին տնկէ յատակս ծովուն. և այնք լինին ձկունք որպէս զինքն նմա զաւակ։ Եւ այս ցուցանէ հաւատալի գոլ զեւա 'ի կողէն Ադամայ։ Կատուվլեփոն՝ որ կոչի վայրահայեաց, ըզհուրն 'ի բերանոյն յերկիր թափէ, զի մի ճնասեսցէ զոք 'ի կենդանեաց։ Բաղէ զշամանդաղ աչացն սրբէ կեղևով եղեգան։ Նոյնպէս և ծիծեառն զխաւարեալ աչս ձագուցն լուսաւորէ։ Եւ այլ այսպիսի բազում են 'ի հաւուց և 'ի ձկանց հիանալոյ արժանի, զորս արար Աստուած։ Արդարև մեծ են գործքն Աստուծոյ, և զամենայն ինչ իմաստութեամբ արար։

Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասաց. Աճեցէք և բազմացարուք, և լցէք զջուրսդ, և թռչունքդ բազմասցին 'ի վերայ երկրի. զի յայտ լիցի թէ յօրհնութենէն Աստուծոյ աճին և ոչ 'ի բնութենէ։ Այլ զի և բաւական լիցին միմեանց 'ի կերակուր, լի պահելով զջուրս և զօդս 'ի փառս արարչին։

Եւ արդ գիտելի է, զի առաջին արարչութիւն օրինակ էր երկրորդիս. զի որպէս 'ի հինգերորդի աւուրս թռչունք 'ի յօդս վերացան 'ի ջրոց, նոյնպէս և սուրբ առաքեալքն 'ի հողանիւթ զարմէս՝ և 'ի ծովու աշխարհական զբաղմանց՝ 'ի յերկինս վերացան, այնու զի 'ի կեանս հրաւիրեցան։ Եւ որպէս 'ի հինգերորդ դարուն զազգն Իսրայէլի Մովսէս յամպն և 'ի ծոմն մկրտեաց, այսպէս և Քրիստոս՝ յաւագ հինգ շաբաթու աւուրն՝ զոտս առաքելոցն ջրով լուաց, և ճանապարհ 'ի յերկինս եբաց, որպէս և Մովսէս Իսրայէլի յանապատն առաջնորդեաց։ Եւ տես՝ զի յերրորդ աւուրն՝ ընդ զգալի ծառոց և զտունկս իմանալեացն տնկեաց. այս է՝ զընտրութիւն սուրբ մարգարէիցն գուշակեաց։ Եւ 'ի չորրորդում աւուր 'ի նմանութիւն արեգականն և աստեղաց աւետիս ծնընդեանն Քրիստոսի։ Եւ ընտրութիւն ամենայն սրբոցն Աստուծոյ 'ի նմանութիւն աստեղացն գուշակեցաւ, ընդ արդարութեան արեգականն Քրիստոսի։ Այսպէս և սուրբ առաքեալքն յաւուր հինգշաբաթուս ընտրեցան լուացմամբ ոտից նոցա։ Եւ յաւուր հինգշաբաթի, Համբարձմանն Քրիստոսի՝ կաթուղիկոսունք ձեռնադրեալ օրհնեցան 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Կը շարունակուի։

ՍԵԻԱՊԱՐԱՆՈՑ ԿԱՐԱՊ

Մեր կողմերը տեսնուած կարապը (cygnus olor) որ զարմանալի է մարմնոյն մեծութեամբ, կլորաձև ու վայելուչ տեսքով, փայլուն և ջինջ սպիտակութեամբ, դիւրաթեքու կորովի շարժմունքով, մերթ ոգելի և մերթ քաղցրագեղ կեցուածքով, և որ իր փափուկ և հիացուցիչ գեղեցկութեան համար դիցաբանութենէ հայր անուանած է